ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-4/2-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 03.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Արման Կադալյան Վալերիի» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Կադալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 15.02.2023թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-23-4/2-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

Միաժամանակ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին փոփոխել Պայմանագրով սահմանված ընկերության 096260211ՀՎՀՀ-ն, սահմանելով՝ ՀՎՀՀ 81832425:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 4 145 400 (չորս միլիոն հարյուր քառասունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արման Կադալյան Վալերիի» Ա/Ձ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Ավանեսովի 26փ. 10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 1570032132510100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 81832425
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԿԱԴԱԼՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-23-4/2-3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/Հ	Անվանումը	Չ/Մ	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ	Ապրանքի մատակարարումը 2023թ. ըստ եռամսյակների, ընդ որում,	
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ
1(9)	Բեռնափոխադրիչներ (Բեռնափոխադրման սայլակ (ռոխլի))	հատ	21	197 400	4 145 400	6	15

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-4/2-3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի մասին			Նախատեսվում է ֆինանսավորել 2023թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 11.12.2023թ., ընդ որում		
Չ/h	անվանումը	CPV կոդը	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1(9)	Բեռնափոխադրիչներ (Բեռնափոխադրման սայլակ (ռոխլի))	34141400/501	1 184 400	4 145 400	4 145 400

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արման Կադալյան Վալերիի» Ա/Ձ
տնօրեն

Ա. ԿԱԴԱԼՅԱՆ